



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն**

« 07 » « *փետրվար* » 2023 թ. № 40-Լ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի N 273-Լ  
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորող հանձնաժողով ստեղծելու, լիցենզավորող հանձնաժողովի անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 273-Լ հրամանի հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Բ. Սահակյան-շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետ» բառերը փոխարինել «Լ. Փափախյան-շրջակա միջավայրի նախարարության վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության պետի պարտականությունները կատարող» բառերով,

2) «Շ. Մադոյան-շրջակա միջավայրի նախարարության թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)» բառերը փոխարինել «Շ. Մադոյան-շրջակա միջավայրի նախարարության

Ֆինանսատնտեսական վարչության համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժնի  
համակարգչային տեխնիկայի սպասարկման մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)  
բառերով:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/7/2023

X



ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

« 07 » *փետրվար* 2023թ.  
ք. Երևան